ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Հայկ Հմայակի Հարությունյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 2018թ. մարտի 26-30-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   «Տայկայ Գրուպ»-ի խորհրդի նախագահ Թաո Չժուն (Taikai Electric Shandong Taikai Power Engineering Co., Ltd)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Չինական «Տայկայ Գրուպ»-ի արտադրանքին ծանոթանալու, ինչպես նաև համագործակցության հարցեր քննարկելու նպատակով

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարները, մասնավորապես՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ենթակայանների վերակառուցման կամ նոր ենթակայանների կառուցման համար լիզինգի տեսքով ֆինանսավորումն իրականացնելու վերաբերյալ «Տայկայ Գրուպ»-ի առաջարկը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպումներ են տեղի ունեցել «Տայկայ Գրուպ»-ի խորհրդի նախագահի, ՉԺՀ արտահանման և վարկի ապահովագրության «Սինոսուր» կորպորացիայի ներկայացուցիչների հետ: «NR ELECTRIC CO. LTD» ընկերության համապատասխան ներկայացուցիչների հետ հանդիպմանը քննարկվել են ռելեական պաշտպանության ավտոմատ սարքավորումների, թվային ենթակայանների տեխնիկական, ինչպես նաև ԲԼՀՀ փոխանցման նոր հնարավորությունները:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Հանդիպման արդյունքերով 2018թ. մարտի 28-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և չինական «Տայկայ Գրուպ»-ի միջև ստորագրվել է (համագործակցության վերաբերալ) Փոխըմբռնման Հուշագիր:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

   Շարունակել գործընկերային հարաբերությունները «Տայկայ Գրուպ»-ի հետ: Քննարկել վերջինիս և «Սինոսուր» կորպորացիայի համագործակցության շրջանակներում ներկայացվող կոմերցիոն առաջարկները, կատարել մանրակրկիտ տեխնիկատնտեսական հաշվարկ և, ընդունելի համարելու դեպքում, ապահովել համագործակցություն:

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի տեղակալ **Հ. Հ. Հարությունյան**